Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ

Մարզ Կոտայք, համայնք Հրազդան Ձրառատ թաղամասի 551/10 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի

Պատվիրատու՝

Քաղաքացի Մարսել Արզումանյան

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Մինասյան _____

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3
Ձեռնարկողի մասին տեղեկություն 3
1.2 Ձեռնարկող՝ 3
Քաղաքացի Մարսել Արզումանյան 3
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ 3
Երևան, Աջափնյակ, նորաշեն 3
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ 3
Երևան, Աջափնյակ, նորաշեն 3
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ 3
Կոտայքի մարզ, Հրազդան համայնք 3
1.1 Հապավումներ 3
1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը 4
1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը 8
1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր 8
էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ 10
1.4 ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12
1.4.1 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում 19
1.4.2 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ 19
1.4.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ 20
1.4.4 Կադրային ապահովում և շինտեխնիկա 22
1.4.5 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում 24
2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ 26
2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 26
2.3 Օդային ավազան 42
2.4 Ջրային ռեսուրսներ 44
2.5 Հողերի նկարագիրը 45
2.6 Հիմնային աշխատանքներ 45
2.8 Թափոնների կառավարում 51
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 51
3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 52
3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 52
3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 53
3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ 53
3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 53
3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 54
3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 55
3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ 57
4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ 57
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 59
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ 62
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 62
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 63

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	Քաղաքացի Մարսել Արզումանյան
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Երևան, Աջափնյակ, նորաշեն
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Երևան, Աջափնյակ, նորաշեն
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Կոտայքի մարզ, Հրազդան համայնք

1.1 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաֆունկցիոնալ շենքի նախագիծը նախատեսվում է իրականացնել Մարզ Կոտայք, համայնք Հրազդան Ջրառատ թաղամասի 551/10 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

2023թ մայիսի 3-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաբնակարան շենքի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա 5
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ

(կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը 27.11.2006թ.,

17. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը 23.11.1999թ.,

18.«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը 03.04.2000թ.,

19. ՀՀ կառավարության 29.01.2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշումը,

20. ՀՀ կառավարության 29.01.2010թ. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշումը,

21. ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781 որոշումը:

22. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Նորոշումը,

23. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավա-ությունը,

պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշում:

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքը (Կոտայք, համայնք Հրազդան Ջրառատ թաղամաս 551/10 հողամաս) նախատեսված է մեկ նկուղային և 10 վերգետնյա հարկերով: Շենքը բաղկացած է 2 մասից, առանձնացված է դեֆորմացիոն կարանով, ունի 4 մուտք: Շենքի առանցքային չափերն են - 102.0x41.0 մ:

-1 նկուղային հարկում՝ -3.8 մ նիշում նախատեսված է ավտոկայանատեղի 175 մեքենայի համար, տեխնիկական սպասարկման տարածքներ: Բակի հարակից տարածքում առկա է նաև բացօթյա ավտոկայանատեղի 22 մեքենայի համար, և հասարակական առեվտրային տարածքների համար նախատեսված է 10 ավտոկայանատեղի:

Առաջին հարկում նախատեսված է բնակելի շենքի գլխավոր մուտքերը և ընդհանուր օգտագործման հասարակական տարածքներ, պահեստներ, սրճարան, հնարավոր է սպորտային կենտրոն, ֆիտնես և այլն: 1-ին հարկի հասարակական հատվածում նախատեսված է ծխահեռացման ինքնաշխատ համակարգ:

2-ից 10-րդ հարկերում նախատեսված են բնակարաններ:

Հարկերը հաղորդակցվում են ներքին աստիճանավանդակով և վերելակներով: Աստիճանավանդակների բոլոր դռները հակահրդեհային են:

Տանիքը նախատեսվում է հարթ, ջրահեռացումը՝ կազմակերպված ներքին ցանցով:

Արտաքին պատեր՝

-նկուղային հարկերի արտաքին պատերը նախատեսված է երկաթ-բետոնից 300մմ հաստությամբ, արտաքին կողմից երեսպատված ջրամեկուսիչ շերտով և մասնակի երեսպատված 30մմ հաստությամբ բազալտե սալիկներով:

-արտաքին պատերը նախատեսված է բետոնե բլոկներից շար, երեսպատված ջերմամեկուսիչ շերտով եվ պատված կլինեն ճակատի կողմից կերամոգրանիտե

սալիկներով՝ կախովի անկերային համակարգով: մասնակի տեղերում հնարավոր է ալյուկոբոնդի, բնական քարերի երեսպատում:

Ներքին պատեր՝

-միջնորմները՝ իրականացվում են 100մմ,150մմ, 200մմ հաստությամբ բետոնե բլոկներից պատեր:

±0.00մ հարաբերական նիշը համապատասխանում է առաջին հարկի մաքուր հատակի նիշին :

Նախագծով համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջների սակավաշարժ խմբերի համար նախատեսված են թեքահարթակներ:

Տանիքների ջրահեռացումը նախագծվել է կազմակերպված ջրահեռցմամբ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Տարածքի ընդհանուր մակերեսը – 6766 քմ-100%,

Կառուցապատման մակերես - 2752.2 քմ - 40.68%;

Ճանապարհ, մուտքեր - 1149.3 քմ - 16.99%

- Կանաչապատման մակերես, բարեկարգում - 2864.5 քմ -42.33%

-Ընդհանուր բնակարանների քանակը - 379 հատ

-Ստորգետնյա մեքենատեղերի քանակը - 175 հատ

-Վերգետնյա մեքենատեղերի քանակը - 32 հատ

- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման համար:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Ստորերկրյա ջրերի մուտքը հիմնատակեր բացառելու համար նախագծով նախատեսվում է հիմնասալ ջրակայուն անթափանց բետոնից, ջրամեկուսացված տակից և կողային պարագծով բոլոր հատվածներում դրենաժային համակարգով:

Շենքի բնակելի մասի օդափոխությունը նախատեսված է բնական՝ օդատարերով, որոնք բարձրանում են հորանի մեջ:

Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ:

Բնակարանների սանհանգուցներից արտածման համար նախատեսված օդատարերը, առանձին առանձին մտնում են հորանի մեջ հատուկ նախատեսված օդատարի մեջ, մեկուսացվում են բազալտե հանքաբամբակով և բարձրանում են 2,5մ: Հորանի մեջ մտնող օդատարերը պատրաստվում են 0.5 մմ հաստությամբ ցինկապատ պողպատից:

Յուրաքանչյուր բնակարանի սանհանգույցում նախատեսվում է առաստաղային օդամղիչ:

Խոհանոցների արտածման համար նախատեսված օդատարերը պատրաստվում են հրակայուն 1մմ հաստությամբ սև պողպատից և մեկուսացվում են բազալտե հանքաբամբակով, առանձին առանձին մտնում են հորանի մեջ հատուկ նախատեսված օդատարի մեջ և բարձրանում են 2,5մ:

Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում:

Ծխահեռացման օդամուղերը տեղակայված են տանիքի վրա:

Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակակենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

<u>Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ</u>

Շենքի էներգաարդյունավետության մակարդակը գնահատելու համար՝ նախատեսված է օդափոխվող ֆասադային համակարգ /вент-фасад/, որը ներառում է

ջերմամեկուսիչ շերտի առկայությունը, երեսպատվող քարերի համար լրացուցիչ կոնստրուկտիվ համակարգ, անկեռներով ամրացված արտաքին պատի մակերևույթին: Արտաքին պատի արտաքին կողմից ամրացվող ջերմամեկուսիչ շերտը՝ 100մմ հաստությամբ հանքային բամբակի սալիկները ապահովում են արտաքին պատերի ջերմային դիմադրության նորմատիվային պահանջները /հանգույցները կցվում են / :

Շենքի տանիքը նախատեսված է հարթ, չշահագործվող: Տանիքի համար նախատեսված շերտերը նույնպես հաշվարկված են բարձր ջերմային դիմադրության համար, որը բարձրացնում է շենքերի էներգաարդյունավետությունը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ստորգետնյա ավտոկայանատեղին ունի երկակի նշանակություն, որը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Այս հարկում նախատեսված է իրականացնել սանհանգույցներ պատսպարանից օգտվողների համար, այդ թվում նաև մեկ սանհանգույց սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Տվյալ տարածքը ապահովված է օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Աստիճանավանդակներում նախատեսված է տեղադրել հրակայուն դռներ:

1.4 ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքների իրականացման նպատակն է համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 551/10 հողամասի տարածքի նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան հաշվետվության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. ճարտարագիտաերկրաբանական հետազննություններ:

2. Ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը: Նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն:

3. Տեղադիտական հետազննություններով վեր հանելու համար վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները /սողանք, քարաթափում, ճահճացում և այլ/:

4. Հորատանցքներով աշխատանքներ՝ նշված հրապարակներում լիթոլոգիական կտրվածքները, գրունտերի շերտերը ու նրանց հզորությունները, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայությունը, որոշելու նպատակով:

5. Օգտագործել այս տարածքում նախկինում կատարված լաբորատոր նյութերը կախված լիթոլոգիական կտրվածքների առանձնահատկություններից:

6. Նախկինում կատարված խախտված և բնական կառուցվածքի գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ դրանց ֆիզիկամեխանիկական բնութագրերի համար:

7. Դաշտային և ֆոնդային նյութերի կամերալ մշակում:

Վերը շարադրված աշխատանքների իրականացման արդյունքում կազմվել է տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացություն:

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է հորատման եղանակով: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երկու շերտեր: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ 1 Ավազակավեր շագանակագույն, թույլ և միջին խոնավ, պինդ թանձրությամբ, խճի ու խճավազի մինչև 20-25% պարունակությամբ: Դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի (33г) III կարգ է:

Շերտ 2 Ալյուվիալ ծագման լավ գնդավորված ճալաքարա-կոպճային նստվածքներ 10-12% գլաքարով և և մոտ 15% խառնավազի լցանյութով: Բեկորային նյութը տարակազմ է, լավ և միջին հղկվածության: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի (6г) IV կարգ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 551/10 հողամասի տարածքի ինժիներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության եզրակացություն:

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

- Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է գրունտների 2 տարբեր շերտերով, որոնց ֆիզիկամեխանիկական հատկությունների ընդհանրացված ցուցանիշները բերված են 1 աղյուսակում:
- Տեղամասում փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր բացահայտվել են . հորատանցք 1-ում՝ 2. 7մ խորությունից, հորատանցք 2-ում՝ 2. 3մ խորությունից, հորատանցք 3-ում՝ 1. 2մ խորությունից, հորատանցք 4-ում՝ 1. 5մ խորությունից, հորատանցք 5-ում՝ 1. 8մ խորությունից, հորատանցք 6-ում՝ 1. 1մ խորությունից, հորատանցք 7-ում՝1. 0մ խորությունից :
- Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար, ապահովելով գրունտերի միասեռությունը, որպես հիմնատակ առաջարկվում է
    - շերտ 1-ը /ավազակավեր /, որոնք ըստ սեյսմիկ հատկությամբ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 3-րդ կարգ են:
        - ✓ Դիմադրությունը R= 2. 0կգ/սմ^2
        - ✓ Ընկրկելիության գործակիցը K_0 =2000 տ/մ^3
    - շերտ 2-ը /ճալաքարակոպճային գրունտներ /, որոնք ըստ սեյսմիկ հատկությամբ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:
        - ✓ Դիմադրությունը R= 3. 5կգ/սմ^2
        - ✓ Ընկրկելիության գործակիցը K_0 =5000 տ/մ^3
- Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի Հրազդան քաղաքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,4g և ունի 8-9 բալ սեյսմիկայնություն:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 92 սմ:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ բացակայում են:

Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար։

Երկրաբան՝ Հ.Տիտիզյան

Կոտայքի մարզ
Հրազդան քաղաք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 07-001-0185-0053
Մասշտաբ 1: 2000

Կադաստրի
կոմիտե

	Կոորդինատները		Գծային չափերը (մետր)
	X	Y	
1	8478390.0510	4489156.0989	13.16
2	8478380.8828	4489149.4200	2.09
3	8478379.4037	4489148.0149	2.42
4	8478377.2147	4489146.9694	9.87
5	8478367.6734	4489144.4460	0.63
6	8478367.0020	4489144.0354	12.33
7	8478354.8821	4489143.5010	11.96
8	8478342.0269	4489142.7303	3.92
9	8478339.0153	4489143.0896	2.24
10	8478338.7932	4489142.7166	112.04
11	8478358.8864	4489031.8557	7.10
12	8478360.2745	4489024.8929	3.94
13	8478361.0447	4489021.0259	55.40
14	8478415.3728	4489031.8749	51.96
15	8478405.2179	4489082.8307	2.24
16	8478404.7794	4489085.0310	75.36
1	8478396.0510	4489156.0989	

տպագրման գրասենյակ

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ


"A-B" ՄԱՍՆԱՇԵՆՔ, ՍՈԱՅԻՆ ՀԱՐԿԻ
ՀԱՏԱԿԱԳԻԾ (±0.00 ՆԻՇԻ ՎՐԱ)

Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 36,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

1.4.1 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինարարությունը բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.4.2 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Հրազդան կամ Ծաղկաձոր քաղաքների մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.4.4 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 320 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ – 10 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Կցովի աշտարակային վերամբարձ կռունկ	QTZ 125 սլաքը 40-50մ	3
2	Էքսկավատոր՝կախովի սարքավորումներով	JCB JS130LC	3
3	Ավտոբետոնապոմպ	SCHWING S36 SX	3
4	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	6
5	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	12
6	Փոխարկիչ թրթռիչների համար	ИВ-4	6
7	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	3
8	Եռակցման տրանսֆորմատոր	ТД-500	6
9	Տոփանիչներ պնևմո		6
10	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	6
11	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
12	Ավտոբետոնախառնիչ	СБ69Б	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.4.5 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է 40 տ և շինարարական աղբն է 1600 տ: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) **Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$W_{խ.տ.} = (n \times N + n_1 \times N_1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 10 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ^{3}օր/մարդ

n_1– սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 310 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1080 օր

$W_{խ.տ.}$= (10 x 0.016 + 310 x 0.025) x 1080 = 8542 խմ/շին. ժամ.:

b) **Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$Ư_1$ = S_1 x K_1 x T, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 4000 քմ,

K_1 – 1 մ^2 օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1080

$Ư_1$ = 4000 x 0.0015 x 1080 = 6480 խմ/շին. ժամ.:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 15022 խմ/շին. ժամ:

Համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, ջրամատակարարումը կիրականացվի մաքրավանի ջրաղբյուրից, կոյուղին կմիացվի տարածքից 1.8կմ հեռավորությամբ անցնող D=1000մմ կոյուղատարին:

Շինարարության փուլում ջրցանման ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Հրազդան քաղաքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 1041 Կվա ծախսով կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Գազաֆիկացումը 1300խմ/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել Հրազդան քաղաքում գտնվող գազաբաշխիչ կայան 2-ում գտնվող d=350մմ բարձր ճնշման գործող գազատարից:

Շենքում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամաբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հետազոտվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզի, Հրազդան համայնքի Զրառատ թաղամասի 551/10 հասցեում: Տարածքը սահմանակից է Ծաղկաձոր համայնքին: Տարածքը իրենից ներկայացնում է չկառուցապատված հող: Հողամասում ծառեր չկան:

Գեոմորֆոլոգիական տեսակետից Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Հրազդան գետի ափին: Երևանից հեռու է 40 կմ հյուսիս-արևելք: Ուսումնասիրվող տարածը շրջապատում են հյուսիսից՝ Փամբակի, հարավ-արևմուտքից՝ Ծաղկունյաց, արևելքից և հարավ-արևելքից՝ Գեղամա լեռնաշղթաների մաս կազմող սարավանդները:

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդական հասակի Ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներ, որոնց արտաքին շերտը ծածկված է դելյուվիալ և պրոլյուվիալ ծագման նստվածքներով, որոնք ներկայացված են ավազակավային գրունտներով:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ, 8-9 բալլ սեյսմիկությամբ:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը՝ կախված երկրաբանական կտրվածքից, համարվում է մթնոլորտային տեղումների ինֆիլտրացիոն գոտի: Ստորերկրյա ջրերը բեռնաթաձվում են Հրազդան գետը: Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Ժողովրդագրական կազմ ու բնակչություն

Հրազդան, Հրազդան քաղաքը գտնվում է Հայաստանի Կոտայքի մարզում և հանդիսանում է նրա մարզկենտրոնը: Քաղաքը գոտևորում են հյուսիսից՝ Փամբակի, հարավ-արևմուտքից՝ Ծաղկունյաց, արևելքից և հարավ-արևելքից՝ Գեղամա լեռնաշղթաների մաս կազմող սարավանդները: Քաղաքի համայնապատկերի վրա հյուսիս - արևմուտքում բարձրանում է Թեղենիսը՝ Ծաղկունյաց լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը (2851 մետր): Հյուսիսային կողմում ուրվագծվում են Փամբակի լեռնաշղթայի լեռնագագաթներից Մայմեխն (3080 մետր) ու Թեժասարը (3100 մետր): Արևելքում հորիզոնը ծածկում է Ցուլասարի զանգվածը (2390 մետր): Հրազդան քաղաքը

գտնվում է ծովի մակերևույթից 1695-1750 մետր բարձրության վրա: Ունի բարեխառն ցամաքային կլիմա: Ձմեռները խստաշունչ են: Երբեմն ջերմաստիճանը իջնում է - 30-ից ավելի ցածր, իսկ գրանցված ամենացածր ջերմաստիճանը եղել է -38 աստիճան: Ամառները հով է: Այստեղ ջերմաստիճանը երբեք չի բարձրանում 30-35 աստիճանից, իսկ գրանցված ամենաբարձր ջերմաստիճանը եղել է 36 աստիճան: Տարվա միջին ջերմաստիճանը կազմում է 5 աստիճան ըստ ցելսիուսի սանդղակի: Մշտական բնակչության քաղաքը 53683 մարդ:

Հրազդան համայնքի տարածքում գրանցված պատմության և մշակույթի հուշարձաններ:

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Ամրոց	Ք.ա. 2-1 հզ	քաղաքից 2.5 կմ հվ-աե, Բերդի դար սարի գագաթին
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	ամրոցի ամ ստորոտին
Գերեզմանոց	միջնադար, 19-20 դդ.	Աղբյուրակ թաղամաս, հվ-աե եզրին
Գերեզմանոց	13-20 դդ.	Կաքավաձոր թաղամասի ամ մասում, բարձունքի վրա
Մատուռ	16-17 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	ագուցված է մատուռի հս պատին, ներքուստ
Խաչքար	13 դ.	ագուցված է մատուռի հս պատին, ներքուստ
Խաչքար	13 դ.	մատուռի մուտքից հս
Գերեզմանոց	միջնադար	Մաքրավան թաղամաս, Մաքրավանքից 700-800 մ հս-աե
Խաչքար	12-13 դդ.	
Գերեզմանոց	13-20 դդ.	Վանատուր թաղամասում, Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանի մոտ
Խաչքար	13 դ.	
Խաչքար	13-14 դդ.	
Խաչքար	13-14 դդ.	գերեզմանոցի կենտրոնում
Խաչքար	14-15 դդ.	գերեզմանոցի մուտքի մոտ
Խաչքար	14-15 դդ.	գերեզմանոցի ամ եզրին
Գերեզմանոց	19-20 դդ.	քաղաքի մեջ, N 4 դպրոցի մոտ
Խաչքար	12 դ.	
Գյուղատեղի	12-15 դդ.	Կաքավաձոր թաղամասից 2 կմ հվ-աե
Գերեզմանոց	12-15 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	1216 թ.	
Գյուղատեղի	միջնադար	Մաքրավան թաղամաս, Ծաղկաձորից 6 կմ ամ
Մատուռ	միջնադար	
Խաչքար	11 դ.	
Գերեզմանոց	միջնադար	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար	10 դ.	
Խաչքար	10 դ.	
Խաչքար	10-11 դդ.	
Խաչքար	10-11 դդ.	
Խաչքար	10-11 դդ.	
Խաչքար	11 դ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	12 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	14-15 դդ.	
Գյուղատեղի	միջնադար	քաղաքից 3 կմ հվ-աե
Եկեղեցի Սբ. Ամենափրկիչ	միջնադար	
Խաչքար	9-10 դդ.	
Խաչքար	9-10 դդ.	
Խաչքար	9-10 դդ.	
Խաչքար	10 դ.	
Խաչքար	10 դ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	11-12 դդ.	
Գերեզմանոց	ուշ միջնադար	
Տապանաքար	1669 թ.	
Տապանաքար	1672 թ.	
Տապանաքար	1675 թ.	
Տապանաքար	1691 թ.	
Տապանաքար	17 դ.	
Տապանաքար	1709 թ.	
Գյուղատեղի	զարգացած միջնադար	Վանատուր թաղամասից Թեղենիս սար տանող ճանապարհի երկու կողմում
Գերեզմանոց	10-17 դդ.	գյուղատեղիում
Խաչքար	10-11 դդ.	
Խաչքար	11 դ.	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	13 դ.	
Խաչքար	13 դ.	
Խաչքար	13 դ.	
Խաչքար	13 դ.	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար	13 դ.	
Խաչքար	15 դ.	
Խաչքար	1676 թ.	
Խաչքար	17 դ.	
Տապանաքար Սարգսի	12-13 դդ.	
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	քաղաքից 5 կմ հվ-աե
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	քաղաքից 10 կմ հվ-աե
Եկեղեցի Ս. Ստեփանոս	10-12 դդ.	Աղբյուրակ թաղամասում, բլրի վրա
Խաչքար	10 դ.	ագուցված է եկեղեցու հս ավանդատան աե պատին
Խաչքար	10-11 դդ.	ագուցված է աե ճակատին
Խաչքար	11-12 դդ.	ագուցված է եկեղեցու հս-աե անկյունում, արտաքուստ
Խաչքար	12-13 դդ.	դրված է եկեղեցու մուտքի վերևում, արտաքուստ
Խաչքար	12-13 դդ.	դրված է եկեղեցու մուտքի վերևում, արտաքուստ
Խաչքար	12-13 դդ.	եկեղեցում, հվ պատի տակ
Խաչքար	12-13 դդ.	ագուցված է եկեղեցու հս-աե անկյունում, արտաքուստ
Խաչքար	14 դ.	եկեղեցու հս-աե անկյունում, արտաքուստ
Գերեզմանոց	9-17 դդ.	եկեղեցու շուրջը
Խաչքար Կապույտ խաչ		
Խաչքար	9-10 դդ.	գերեզմանոցի հս-ամ մասում
Խաչքար	10-11 դդ.	եկեղեցու ավ-աե անկյան մոտ
Խաչքար	10-11 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	գերեզմանոցի հս-ամ մասում
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	գերեզմանոցի կենտրոնական մասում
Խաչքար	1248 թ.	գերեզմանոցի հս-ամ մասում
Խաչքար	13 դ.	եկեղեցուց 1,5 կմ ամ
Խաչքար	13-14 դդ.	գերեզմանոցի հս-ամ մասում
Խաչքար	13-14 դդ.	գերեզմանոցի հս մասում
Խաչքար	14 դ.	եկեղեցուց աե, բլրի ստորոտում
Խաչքար	14-15 դդ.	եկեղեցու հս պատի մոտ
Խաչքար	15 դ.	եկեղեցուց մոտ 15 մ աե
Տապանաքար	16-17 դդ.	եկեղեցու հս պատի տակ
Եկեղեցի	1861 թ.	քաղաքի հվ-ամ մասում, Գր. Նարեկացու փող.
Խաչքար	10 դ.	ագուցված է եկեղեցու բեմի ճակատին
Խաչքար	10-11 դդ.	ագուցված է եկեղեցու աե ճակատին
Խաչքար	10-11 դդ.	ագուցված է եկեղեցու աե ճակատին
Խաչքար	13 դ.	ագուցված է եկեղեցու հվ ճակատին, մուտքից վերև
Խաչքար	13-14 դդ.	ագուցված է եկեղեցու հվ ճակատին
Խաչքար	13-14 դդ.	ագուցված է եկեղեցու հվ ճակատին, նախորդի մոտ
Խաչքար	13-14 դդ.	ագուցված է եկեղեցու հվ ճակատին, նախորդի մոտ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար	16-17 դդ.	ագուցված է եկեղեցու բեմի ճակատին
Խաչքար	16-17 դդ.	ագուցված է եկեղեցու բեմի ճակատին
Խաչքար	16-17 դդ.	ագուցված է եկեղեցու բեմի ճակատին
Զանգակատուն	19 դ.	կից է եկեղեցուն հվ-ից
Գերեզմանոց	10-19 դդ.	
Խաչքար	10-11 դդ.	եկեղեցուց 8 մ ամ
Խաչքար	12-13 դդ.	գերեզմանոցի կենտրոնական մասում
Խաչքար	14-15 դդ.	գերեզմանոցի աե մասում
Խաչքար	1546 թ.	գերեզմանոցի աե մասում
Եկեղեցի Սբ. Աստվածածին	1897 թ.	Կաքավաձոր թաղամասում
Խաչքար	10-11 դդ.	ագուցված է եկեղեցու ամ ճակատին, մուտքից վերև
Խաչքար	11 դ.	ագուցված է եկեղեցու հվ ճակատին, արտաքուստ
Խաչքար	12-13 դդ.	ագուցված է եկեղեցու ամ ճակատին, մուտքից հվ
Խաչքար	13 դ.	ագուցված է եկեղեցու ամ ճակատին, մուտքից հս
Գերեզմանոց	12-19 դդ.	
Խաչքար		
Խաչքար		
Տապանաքար Նիկողայոս քահանայի		եկեղեցուց հս
Եկեղեցի Սբ. Աստվածածին	1881-1883 թթ.	Վանատուր թաղամասի հս-ամ մասում
Խաչքար	1223 թ.	Վանատուր թաղամասի հս-ամ մասում
Խաչքար	13-14 դդ.	ագուցված է եկեղեցու հս ճակատին, մուտքից աջ
Խաչքար	13-14 դդ.	ագուցված է եկեղեցու հս ճակատին, մուտքից ձախ
Խաչքար	13-14 դդ.	ագուցված է եկեղեցու ամ ճակատին, մուտքից հս
Խաչքար	13-14 դդ.	ագուցված է եկեղեցու ամ ճակատին, զանգակատան հվ-աե մույթի տակ
Խաչքար	15-16 դդ.	ագուցված է եկեղեցու հս ճակատին, մուտքից ձախ
Խաչքար	18 դ.	ագուցված է եկեղեցու ամ մուտքի վերևում
Զանգակատուն	19 դ.	կից է եկեղեցուն ամ-ից
Խաչքար	13 դ.	ագուցված է զանգակատան հվ-ամ առագաստի վրա
Գերեզմանոց	9-17 դդ.	եկեղեցուց հվ և աե
Խաչքար	9-10 դդ.	եկեղեցուց 5 մ հվ
Խաչքար	10 դ.	եկեղեցուց 7-8 մ հվ-աե
Խաչքար	13 դ.	եկեղեցուց հվ-աե
Խաչքար	13 դ.	եկեղեցուց 10 մ հվ-աե
Խաչքար	13 դ.	նախորդի մոտ
Խաչքար	13-14 դդ.	եկեղեցուց հվ-աե
Խաչքար	13-14 դդ.	եկեղեցուց 10 մ հվ-աե
Խաչքար	13-14 դդ.	եկեղեցուց 7 մ հվ-աե

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար	15-16 դդ.	եկեղեցուց հվ պատի մոտ
Տապանաքար	16-17 դդ.	եկեղեցուց 15 մ հվ
Տապանաքար	16-17 դդ.	նախորդի մոտ
Խաչքար	9-10 դդ.	Մաքրավան թաղամասից 2,5 կմ հվ, նորաշեն մատուռում
Խաչքար	9-10 դդ.	նախորդի մոտ
Խաչքար	9-10 դդ.	Վանատուր թաղամասի հս եզրին, բլրի գագաթին, նորաշեն մատուռում
Խաչքար	10 դ.	Շահումյան փող. 120, նորաշեն մատուռում
Խաչքար	10 դ.	քաղաքի հվ մասում
Խաչքար	10-11 դդ.	Մաքրավան թաղամասում
Խաչքար	11 դ.	նախորդի մոտ
Խաչքար	11 դ.	նախորդի մոտ
Խաչքար	11 դ.	Մաքրավանքից 1,5 կմ հվ-ամ
Խաչքար	11 դ.	քաղաքից 1 կմ հվ-աե
Խաչքար	11-12 դդ.	քաղաքի ամ մասում
Խաչքար	11-12 դդ.	քաղաքի ամ մասում
Խաչքար	11-12 դդ.	քաղաքի ամ մասում
Խաչքար	12-13 դդ.	քաղաքից 1 կմ հվ-աե
Խաչքար	12 դ.	Մաքրավան թաղամասից հս-ամ, սարալանջին
Խաչքար	12 դ.	Մաքրավան թաղամասում, նորաշեն մատուռում
Խաչքար	12-13 դդ.	Մաքրավանքից մոտ 150 մ հս-ամ
Խաչքար	13 դ.	Վանատուր թաղամասի հվ մասում
Խաչքար	13 դ.	Վանատուր թաղամաս տանող ճանապարհի աջ կողմում, գետափին
Խաչքար	13 դ.	Մաքրավանքից մոտ 150 մ հս-ամ
Խաչքար	13 դ.	Մաքրավանք տանող ճանապարհի ձախ կողմում, աղբյուրի մոտ
Խաչքար	13 դ.	Մաքրավանք տանող ճանապարհի ձախ կողմում, աղբյուրի մոտ
Խաչքար Գրիգորի	13 դ.	Մաքրավանք տանող ճանապարհի ձախ կողմում, աղբյուրից մոտ 20 մ հվ-ամ
Խաչքար	13-14 դդ.	Մաքրավանք տանող ճանապարհի ձախ կողմում, աղբյուրի մոտ
Խաչքար	13-14 դդ.	Աղբյուրակից Բջնի տանող ճանապարհի մոտ, սարի գագաթին
Խաչքար	14-15 դդ.	քաղաքից 1 կմ հվ-աե
Խաչքար	14-15 դդ.	քաղաքից 5 կմ հվ-աե
Խաչքար	15 դ.	Կաքավաձոր թաղամասից 1 կմ հվ
Խաչքար	15 դ.	Մաքրավանք տանող ճանապարհի ձախ կողմում, աղբյուրից մոտ 20 մ հվ-ամ
Խաչքար	15 դ.	Շահումյան փող. 120, նորաշեն մատուռում
Խաչքար	1557 թ.	քաղաքից 10 կմ հվ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար	միջնադար	քաղաքի մեջ, Սբ. Խաչ եկեղեցուց հվ
Հուշաղբյուր	1957 թ.	քաղաքի մեջ
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1975 թ.	Կաքավաձոր թաղամասում, եկեղեցուց հս
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1989 թ.	Ներքին Աղբյուրակ թաղամասում
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին		Վանատուր թաղամասում
Գերեզմանոց Արցախում զոհված ազատամարտիկների	1992-2001 թթ.	
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1981 թ.	քաղաքային զբոսայգում
Մատուռ	18-19 դդ.	Կաքավաձոր թաղամասի հս մասում
Մատուռ	միջնադար	քաղաքի Սբ. Խաչ եկեղեցուց հվ
Խաչքար	10 դ.	
Խաչքար	10 դ.	
Խաչքար	10 դ.	
Խաչքար	10-11 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	13 դ.	
Մատուռ ՍԲ. Աստվածածին	վերակառ. 1915 թ.	Կաքավաձոր թաղամասի ամ մասում
Գերեզմանոց	12-20 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	16 դ.	
Մատուռ «Վերին վանք»	4-7 դդ.	Կաքավաձոր թաղամասից մոտ 1 կմ հս
Խաչքար		ագուցված է մատուռի ամ ճակատին, մուտքի վերևում
Գերեզմանոց		մատուռի մոտ
Խաչքար	13 դ.	մատուռի ամ պատի մոտ, մուտքից հվ
Խաչքար	13 դ.	նախորդի մոտ
Խաչքար	13 դ.	մատուռի ամ պատի մոտ, մուտքից հս
Մատուռ «Կապույտ խաչ»	9 դ.	Վանատուր թաղամասում
Գերեզմանոց	9-13 դդ.	մատուռի մոտ
Խաչքար	9-10 դդ.	մատուռից աե
Խաչքար	10 դ.	մատուռից աե
Խաչքար	10 դ.	մատուռից հվ-աե
Խաչքար	10-11 դդ.	մատուռից աե

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար	10-11 դդ.	մատուռից աե
Խաչքար	10-11 դդ.	մատուռից աե
Խաչքար	10-11 դդ.	մատուռից աե
Խաչքար	10-11 դդ.	մատուռից մոտ 15 մ հվ
Խաչքար	12-13 դդ.	մատուռից հվ-աե
Խաչքար	12-13 դդ.	մատուռից աե
Խաչքար	12-13 դդ.	մատուռից աե, ճանապարհի եզրին
Խաչքար	12-13 դդ.	մատուռից աե, ճանապարհի եզրին
Խաչքար	12-13 դդ.	մատուռից հվ-աե
Խաչքար	12-13 դդ.	մատուռից մոտ 10 մ աե
Խաչքար	12-13 դդ.	մատուռից հվ-աե, ճանապարհի եզրին
Խաչքար	13 դ.	մատուռից աե
Խաչքար	13-14 դդ.	մատուռից հվ-աե
Խաչքար	13-14 դդ	մատուռից 15 մ հվ
Խաչքար	13-14 դդ.	մատուռից 15 մ հվ
Խաչքար	13-14 դդ.	մատուռից 20 մ հվ
Խաչքար	13-14 դդ.	մատուռից հվ-աե, ճանապարհի եզրին
Խաչքար	14-15 դդ.	գերեզմանոցի հվ-աե մասում
Վանական համալիր Մաքրավանք	10-17 դդ.	Մաքրավան թաղամասում, բլրակի վրա
Եկեղեցի Սբ. Ամենափրկիչ	10 դ.	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	13 դ.	
Եկեղեցի Սբ. Կաթողիկե	1211 թ.	
Արձանագրություն	1211 թ.	հվ ավանդատան մուտքի վերևու
Խաչքար	1221 թ.	եկեղեցու մուտքից հս
Խաչքար	13 դ.	եկեղեցու մուտքից հվ
Խաչքար	13 դ.	եկեղեցու մուտքից հս
Խաչքար Հովհաննեսի	1629 թ.	եկեղեցու մուտքից հվ
Տապանաքար	1623 թ.	եկեղեցում
Գավիթ	13 դ.	
Խաչքար	9-10 դդ.	
Խաչքար	9-10 դդ.	
Խաչքար	959 թ.	գավթի մեջ
Խաչքար	1039 դդ.	գավթի մեջ
Խաչքար	11-12 դ.	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12 դ.	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	1222թ.	ագուցված է գավթի հվ պատին
Խաչքար	1251թ.	
Խաչքար	13 դ.	ագուցված է գավթի հվ-աե անկյունում, որմնասյան մոտ
Խաչքար	13 դ.	
Խաչքար	13 դ.	
Խաչքար	1339թ.	
Խաչքար	15-16 դդ.	
Խաչքար	1629թ.	
Մատուռ		Մաքրավանքից 100 մ ամ, բլրակի վրա
Նախասրահ		մատուռին կից
Գերեզմանոց		մատուռին կից
Գերեզմանոց	10-14 դդ.	
Խաչքար	10 դ.	
Խաչքար	10 դ.	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	գերեզմանոցի աե մասում
Խաչքար	12-13 դդ.	գերեզմանոցի աե մասում
Խաչքար Անդրեասի	1259թ.	եկեղեցու մուտքից հվ
Խաչքար	1259թ.	նախորդի կողքին
Խաչքար	13 դ.	գերեզմանոցի աե մասում
Խաչքար	13 դ.	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար	13 դ.	գերեզմանոցի աե մասում
Խաչքար	13 դ.	
Խաչքար		
Խաչքար	15 դ.	
Խաչքար Անանի	1577թ	գերեզմանոցի աե մասում
Խաչքար	16 դ.	գերեզմանոցի աե մասում
Խաչքար	17 դ.	գերեզմանոցի աե մասում
Խաչքար	17 դ.	գերեզմանոցի աե մասում
Տապանաքար	16-17 դդ.	
Տապանաքար	16-17 դդ.	
Տապանաքար	16-17 դդ.	
Տապանաքար	16-17 դդ.	
Տապանաքար	16-17 դդ.	
Պարիսպ		
Օժանդակ շինություններ		համալիրի հվ կողմում
Գերեզմանոց	12-14 դդ.	Մաքրավանքից հս-ամ, սարալանջին
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	13 դ.	
Խաչքար	13 դ.	
Խաչքար	13 դ.	
Խաչքար	13 դ.	
Խաչքար	13 դ.	
Խաչքար	13 դ.	
Խաչքար	14 դ.	
Խաչքար	14 դ.	
Խաչքար	14 դ.	
Խաչքար	16 դ.	
Խաչքար	16 դ.	
Տապանաքար	13-14 դդ.	
Տապանաքար	14-15 դդ.	
Տապանաքար Մելիքբեկի	16-17 դդ.	
Վանական համալիր Սբ Ստեփանոս	10-14 դդ.	Աղբյուրակ թաղամասից 3-4 կմ հս-ամ, անտառի մեջ
Եկեղեցի Սբ. Ստեփանոս վանք	10-12 դդ.	
Խաչքար	13 դ.	եկեղեցում
Տապանաքար	13-14 դդ.	հս ավանդատան մեջ
Գերեզմանոց	10-17 դդ.	եկեղեցու մոտ
Խաչքար	13 դ.	հենած եկեղեցու ամ պատին, մուտքից հս
Տապանաքար Հովհաննեսի	1656թ.	եկեղեցուց հվ, բլրալանջին

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
ՔԱՆԴԱԿ	1975թ.	քաղաքի մեջ, հանրախանութի դիմաց
ՔԱՆԴԱԿ	1975թ.	քաղաքային զբոսայգում
ՔԱՆԴԱԿ «ՆԺՈՒՅԳ»	20 դ.	քաղաքային զբոսայգում
ՔԱՐԱՎԱՆԱՏՈՒՆ	13 դ.	Վանատուր թաղամասում

Կոտայքի մարզի բնության հուշարձանների ցանկ

32.	«Անանուն» խզվածքներ	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
33.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
34.	«Թագավորանիստ» խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
35.	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
36.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
37.	«Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
38.	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
39.	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
40.	«Անանուն» լանջային էրոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
41.	«Անանուն» լավային ծալքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
42.	«Անանուն» խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
43.	«Հատիս» հրաբուխ	Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
44.	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ
45.	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
46.	«Անանուն» ապարների բնորոշ	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի

	մերկացում	ՀԷԿ-ի միջև
47.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
48.	«Անանուն» քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
49.	«Գութանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
50.	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ
51.	Զորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Զորաղբյուր

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում առկա հողաբուսաշերտը կօգտագործվի հետագա կանաչապատման աշխատանքներում:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Նախատեսվող կառուցապատումը գտնվում է Կոտայքի մարզի Ծազկաձոր քաղաքի սահմանին: Քաղաքը տեղակայված է Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիս-արևելյան ճյուղավորման Թեղենիս լեռան (2846մ) արևելյան լանջին և ընդգրկում է Տանձաղբյուր գետի ավազանը (ծովի մակերևույթից 1830-2000մ բարձրության վրա): Ռելիեֆը բարդ է, հորիզոնական մասնատվածության խտությունը կազմում է 1.2 կմ/կմ2:Հովտաձորակային ցանցի խտությունը 3.0 հատ/ կմ2 է: Մակերևույթի թեքության անկյունը կազմում է 4-120: Երևանի հետ կապված է 51 կմ բարեկարգ ասֆալտապատ մայրուղով: Մայրաքաղաքի հետ հաղորդակցությունն ավտոմոբիլային է, մասնակիորեն՝ երկթուղային: Ծաղկաձոր քաղաքի ընդհանուր տարածքը կազմում է 1618,29 հա, բնակչությունը՝ 1503 մարդ: Ռեսուրսների հիմնական տեսակներն են ռեկրեացիոն և պատմամշակութային ռեսուրսները, անտառային ֆոնդի հողերը:

Համայնքում գերիշխող են հանգստի կազմակերպման, սպորտի, տուրիզմի, առողջարարական և սպասարկման ծառայությունները: Շնորհիվ կազդուրիչ անտառների և բուժիչ կլիմայի, գեղատեսիլ բնապատկերների և լեռնագրական պայմանների առանձնահատկությունների, Ծաղկաձորը համարվում է հանրապետության ամբողջ տարի գործող կարևորագույն հանգստավայրերից մեկը և, ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 1-ի N95-Ա որոշմամբ այն հայտարարված է որպես Զբոսաշրջային կենտրոն:

2.2 ԿԼԻՄԱՆ

Համայնքը գտնվում է բարձրադիր լեռնային գոտում, այդ իսկ պատճառով ջերմաստիճանը ամռանը այստեղ չի գերազանցում +33 աստիճանը, իսկ ձմռանը -31^{0}C: Ձմռանը կլիման նույնպես մեղմ է: Գտնվելով չոր մերձարևադարձային գոտում՝ տարածքի կլիման բնութագրվում է որպես բարձրլեռնային հատուկ՝ չափավոր տաք, համեմատաբար խոնավ ամառով և չափավոր ցուրտ, անհողմ, ձյունառատ ձմեռով: Տեղումների տարեկան քանակը 688մմ է:

Օդը մշտապես չոր է, այդ պատճառով ցրտերը այնպես էլ ուժեղ չեն զգացվում: Քամու միջին արագությունը 2.1 մ/վ:

Շրջանի օդերևութաբանական պարամետրերը ըստ «Հրազդանի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տարեկան.°C	Բացարձակ նվազագույն.°C	Բացարձակ առավելագույն.°C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդանի	1875	-8.3	-6.6	-2.4	4.8	10.2	13.6	17.0	16.8	13.4	7.4	1.4	-5.1	5.2	-31	33

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը,%														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդանի	79	77	79	70	69	69	67	62	63	67	75	79	71	74	49

Աղյուսակ 3. **Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը**

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը մմ միջին ամսական / օրական առավելագույն													Ձնածածկույթ		
	ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդանի	45	53	67	85	102	69	44	31	34	63	49	46	688	106	120	310
	30	42	40	52	39	42	47	42	49	64	45	34	64			

Աղյուսակ 4. **Բնակավայրի տեղակայման բնութագրեր**

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից. մ	Կլիմայական շրջան
1	2	3
Հրազդանի	1875	Ց

Աղյուսակ 5. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհաղթությունների կրկնելիությունը,%	Միջին ամսական արագությունը,մ/վ	Միջին տարեկան արագությունը,մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևել-յան (Արլ)	Հարավ-արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Հրազդան	823.2	Հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1,9	2,1	18	19	22	24
			2,3	2,4	2,0	1,4	1,9	2,3	2,4	1,7							
		Ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2,1					
			2,3	2,7	2,2	1,8	1,9	2,3	2,4	2,6							
		Հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2,8					
			3,5	3,2	2,9	1,9	2,0	1,9	2,4	2,2							
		Հոկտեմ-բեր	3	12	23	6	11	20	22	3	26	1,7					
			2,0	2,2	2,0	1,7	1,8	2,1	2,2	2,0							

2.3 Օդային ավազան

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 17 շարժական դիտակետ և 1 անշարժ դիտակայան:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:


Փոշի
Կոնց. (մգ/մ³)
Հրազդան
0,35
0,30
0,25
0,20
0,15
0,10
0,05
0,00
I II III IV V VI VII VIII IX X XI XII
Ամիսներ
2020թ.միջ. կոնց.
2021թ.միջ. կոնց.
ՍԹԿ միջ.


Ծծմբի երկօքսիդ (SO₂)
Կոնց. (մգ/մ³)
Հրազդան
0,06
0,05
0,04
0,03
0,02
0,01
0,00
I II III IV V VI VII VIII IX X XI XII
Ամիսներ
2020թ.միջ. կոնց.
2021թ.միջ. կոնց.
ՍԹԿ միջ.


Ազոտի երկօքսիդ (NO₂)
Կոնց. (մգ/մ³)
Հրազդան
0,05
0,04
0,03
0,02
0,01
0,00
I II III IV V VI VII VIII IX X XI XII
Ամիսներ
2020թ.միջ. կոնց.
2021թ.միջ. կոնց.
ՍԹԿ միջ.

2.4 Ջրային ռեսուրսներ

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները (վերջին տարեկան տեղեկանք) ամփոփ 2022թ տեղեկանքից բերված են ստորև:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում:

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, մանգանով, նատրիումով և բորով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից ներքև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.6 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 16050 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր հանվող 14730 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Հրազդանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

2.7 Կենսաբազմազանությունը

Քաղաքին հարակից են Հրազդանի անտառտնտեսության Ծաղկաձորի անտառպետության անտառային էկոհամակարգերը՝ չափավոր չորային կաղնուտա-բոխուտային լայնատերև խառը անտառներով ու հետանտառային նոսրաանտառներով, որտեղ գերակշռող ծառատեսակը Կաղնի խոշորառէջն է *(Quercus macranthera)*: Քաղաքի շրջակա անտառներում աճում են նաև բոխի, հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, ալոճենի, մասրենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Քաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենու *(Pyrus sp., P. georgica, P.communis)* և խնձորենու (*Malus silvestres)* զգալի գերակշռությամբ անտառային որոշ հատվածներ:

Բուն քաղաքն իրենից ներկայացնում է հետանտառային տափաստանացված լանդշաֆտ, որի անմշակ տարածքները ներկայացնում են տարախոտահացազգային, նեղատերև փետրախոտով, ցորնուկներով, թիթեռնածաղկավորների տարախոտով, հացազգիներով և բոշխերով պատված բուսական համակեցություններով:

2.8 Բուսական աշխարհ

Ծաղկաձորի գետավազանի բուսական ծածկույթն ունի որոշակի բարձրունքա-գոտիական տարբերակում: Այստեղ կարելի է հանդիպել տափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերը, դրանց բազմաթիվ ենթատիպերն ու անտրոպոգեն տարբերակները:

Ներկայացվող տարածքը գտնվում է Ծաղկաձորի գետավազանի 1740-1800մ բարձրությունների սահմաններում՝ միջին լեռնային գոտու չափավոր խոնավ, տափաստանացված անտառմարգագետնային գոտում:

Այստեղ կերհանդակներն ունեն երկրորդական ծագում, առաջացել են ոչնչացված անտառների տեղերում՝ բացատներում: Հանդիպում են ինչպես տափաստանային, այնպես էլ մարգագետնային բուսական տիպեր, որոնք հիմնականում օգտագործվում են որպես խոտհարքներ: Կերհանդակների բերքատվությունը և կերային արժեքը բարձր են: Օգտագործվում են որպես գարնան-աշնան արոտավայրեր:

Ծաղկաձորի գետավազանը իրենից ներկայացնում է որոշակիորեն փակ ավազան և քանի որ, այստեղ առկա են հանքային ջրերի ռեսուրսներ, այս հատվածի անտառները համեմատաբար խոնավ են և ավելի պահպանված՝ քան գետավազանի այլ տարածքներում:

Ծաղկաձոր քաղաքի բուսականությունը իրենից ներկայացնում է հացազգիների գերակշռությամբ լեռնատափաստանային տարախոտեր /Ոզնախոտ Վորոնովի (Dactylis Woronovii), Սեզ տափաստանային (Phleum phleoides), Դաշտավլուկ սոխուկավոր (Poa bulbosa) Կելերիա սանրաձև (Koeleris cristata) Ցորնուկ ցցամազ (Bromus squarrosus), Շյուղախոտ ակոսավոր (Festuca sulcata) և այլն/, մասամբ մերձալպյան բարձրախոտերի /իշառվույտ նեապոլիտաական (Melilotus neapolitanus), Եղինջ երկտուն (Urtica dioica), Ծվծվուկ կտրտված (Silene multifida) և այլն/ մասնակցությամբ: Հողաբուսաշերտի հաստությունը 20-30 սմ է: Նշված տափաստանացված տարածքում առանձնանում են սոճու (Pinus hamata), վայրի տանձենու (Pyrus communis) և խնձորենու (Malus silvestres), կաղնու (Quercus macranthera) տարբեր հասակի ծառեր և, տեղ-տեղ նաև մասրենու (Roza) ու ալոճենու (Crataegus) թփեր:

Բույսերի վեգետացիան սկսում է մայիսի սկզբներին: Այստեղ միամյա բույսեր շատ քիչ են հանդիպում, հիմնականում բազմամյա բույսեր են և առանձնանում են շատ արագ վեգետացիոն ժամանակահատվածով՝ հասցնելով ծաղկել ու պտուղ տալ շատ կարճ ժամկետներում: Մայիսի առաջին տասնօրյակին, տերևների և ցողունների կանաչ ֆոնի վրա առանձնանում են Պապլոր հայկականը (Muscari armeniacum) և Գնարբուկ գարնանայինը (Primula veris): Սոխուկավոր բույսերից հետո այս գոտին պատվում է Ranunculus-Ç, Myosotis-Ç, Veronica-Ç ծաղիկների խայտաբղետ գույներով:

Ամռան կեսին ծաղկում են դաշտավլուկները, բոշխերը, ինչպես նաև Gentiana, Campanula, Carum, Taraxacum և այլ թիթեռնաձաղկավորներ, բարդաձաղկավորներ և խաչաձաղկավորներ:

Ծաղկաձոր քաղաքի բնակավայրի տարածքում տեղ-տեղ աչքի են ընկնում խիստ նոսր դասավորվածությամբ միայնակ, կամ խմբերով, կամ մացառուտների վերածված խոշորառէջ կաղնու (Quercus macranthera) ծառերը, որոնք մեծամասամբ հատված են և բնաշվային աճի շնորհիվ վերականգնված: Առկա են նաև կորաբուն կեչի Լիտվինովի (Betula litvinovii) վեցաբուն մեկ ծառ և տեղ-տեղ աճող մասրենու (Rosa canina) ու սովորական կամ մահացու դափնյակի (Daphne mezereum) թփեր:

Մարզի տարածքում հանդիպող և անհետացման եզրին գտնվող բուսատեսակների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր գրքից: ՀՀ Կոտայքի մարզում աճում են 54 տեսակի բույսեր, որոք գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Տարածքին բնորոշ, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակները բերված են աղյուսակում:

Հ/h	Բուսատեսակների անվանումը		Պահպանության կարգավիճակ
	Լատիներեն	Հայերեն	
1	Opopanax persicus	Ճավշիր պարսկական	CR
2	Sedum stoloniferum Gmel.	Թանթանիկ ընձյուղակիր	VU
3	Ophioglossum vulgatum L.	Իժալեզու սովորական	CR
4	Najas minor L.	Ձրահարս փոքր	VU
5	Puccinellia grossheimiana	Անողնուցուկ Գրոսհեյմի	EN
		FUNGI – ՄՆԿԵՐ	
1	Amanita muscaria (L.) Pers	Ճանճասպան կարմիր	VU
2	Boletus edulis Bull	Սպիտակ սունկ, թնջուկ	VU
3	Mutinus caninus	Մուտինուս շնային	EN
4	Ithyphallus ravenelii	Մուտինուս Ռավենելի	DD
5	Ithyphallus impudicus	Թիակիկ սովորական, մորկեղ գարշահոտ	EN
6	Strobilomyces floccopus	Կոնասունկ փաթիլատիկ	VU

2.9 Կենդանական աշխարհ

Ծաղկաձոր համայնքի և դրա շրջակայքի համար դիտարկվում են միայն ողնաշարավոր կենդանիները, քանի որ Գլխավոր հատակագծով նախատեսված աշխատանքները էական ոչ մի ազդեցություն չեն ունենա անողնաշարավոր կենդանիների վրա: Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մինչև 1700 մ ծովիմակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված Crocidura (սպիտակատամիկ), Vulpes vulpes L. (աղվես), Cricetus auratus Nat. (գերմանամուկ), Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ), Perdix perdix L.(կաքավ), Grus grus L. (կռունկ) և այլն:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն), կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության, նախկին ԽՍՀՄ և Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր Գրքերում: Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակները ըստ պահպանության կարգավիճակի (1–անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, 2–անհետացող, կրճատվող):

Հ/h	Կենդանիների անվանումը		Գրանցման Կարմիր գրքի անվանում		
	Լատիներեն	Հայերեն	ՀՀ	ԽՍՀՄ	ԲՊՄՄ
1	Vormela peregusna	Հարավռուսական խայտաքիս	2	2	-
2	Circaetusgo llicus Gmeelin	Եվրոպական օձակեր	1	1	-
3	Lusciniasvecica occidentalis	Իրանական կապտափող	2	-	-
4	Lacerta oarva Boulenger	Փոքրասիական մողես	1	1	-
5	RhinolophusMehelyi	Մեհելիի պայտաքիթ	1	1	-
6	Barbastella leuuuucomelas Gretzschmer	Ասիական լայնականջ չղջիկ	2	-	-
7	Capra aegagrus erxleben	Բեզոարյան այծ	2	2	-
8	Mabuya auuuurata Linneaus	Ոսկեգույն մաբուա	1	1	-
9	Elapha hohenakeri strauch	Անդրկովկասյան սահնօձ	1	1	-
10	Telescopus fallax iberus eichwaldi	Կովկասյան կատվաօձ	1	1	-

2.10 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում:

Նոր կառուցապատվող տարածքների շինարարական աշխատանքների արդյունքում տեղի կունենա հողի բերրի շերտերի մասնակի վնասում (կառուցման փուլում), հողային զանգվածների փորման, հանման և տեղափոխման հետ կապված փոշու արտանետումներ,: շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով առաջացած այրման արգասիքներ և աղմուկ Ազդեցությունների նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,
- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,

- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն:
- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:
- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:
- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի:
- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 180 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով : Հողի բերրի շերտի հանման, հանված բերրի շերտի պահպանումն ու օգտագործումը օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N1404 որոշման :

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:

2.11 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կկց տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական

աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

2.12 Թափոնների կառավարում

Հրազդան քաղաքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 40 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 1600 տ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 14730 խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,

- հողային զանգվածների տեղափոխման,

- շինարարական տեխնիկայի շահագործման,

- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,

- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում

- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 100խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 4000քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկականն միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի համայնքի հետ համաձայնեցված նախագծի հիման վրա: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 2864.5 քմ:

- Տարածքում համաձայն նախնական սխեմայի նախատեսվում է տնկել Կաղնի ամառային 8 հատ, Բարդի նրբագեղ – 4 հատ, Հուդայածառ - 2 հատ, Ֆորզիցիա - 12 հատ, Բարբարիս - 7 հատ, Ասպիրակ - 10 հատ, Ձյունապտղիկ սպիտակ 8 հատ, Սամշիտ – 80 գծմ, սիզամարգ – 2600 քմ: Վերջնական տեսակային կազմը կհստակեցվի կանաչապատման նախագծի հաստատումից հետո:

- Տարածքում առկա հողի բերրի շերտը կօգտագործվի տարածքի կանաչապատման և բարեկարգման աշխատանքերի ընթացքում:
- Տարածքում առկա հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
    - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
    - Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
    - Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:

- Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
- Լայնակույտերը տեղադրվում տարածքում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ

թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն։

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների;
- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և

առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:

- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,

6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 1960000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	400000	400000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	36x35000	1260000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	12x25000	300000
Ամբողջ շինարարության համար		1960000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:, (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի: (c) Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվադողերը: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուդարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:

Արտակարգ իրավիճակների կառավարում	Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ